Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

18.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 4-րդ, 27-րդ, 3-րդ, քաղաքացիական իրավունք բաժնի 4-րդ, 13-րդ, 28-րդ, 32-րդ, 33-րդ, 31-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 4

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից ներկայացված փաստարկներին, ապա վերջինիս կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված դ) տարբերակը, այն է՝ կարող է միայն հարցաքննել վկային, եթե վկան մինչև դատաքննությունը մեկնելու է արտերկիր, ձևակերպված է այնպես (միայն հարցաքննել վկային), ինչը բացառում է նախնական դատական նիստում այլ ապացույցների հետազոտումը, ուստի այն չի կարող համարվել որպես ճիշտ պատասխան:

Հարց 27

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/31316/02/20 քաղաքացիական գործով 02.12.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով այն այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք էլեկտրոնային եղանակով կատարված պետական տուրքի վճարման վերաբերյալ փաստաթուղթը կարող է համարվել

պետական տուրքի վճարման փաստը հավաստող պատշաճ ապացույց այն դեպքում, երբ այն ներկայացված է թղթային տարբերակով և դրանում առկա է վճարող իրավաբանական անձի իրավասու անձի էլեկտրոնային ստորագրությունը, արձանագրել է, որ էլեկտրոնային եղանակով կատարված վճարումների վերաբերյալ վճարահաշվարկային փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում պահանջվում է բացառապես վճարող իրավաբանական անձի իրավասու անձի ստորագրությունը:

Հարց 3

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 5-րդ մասով:

Քաղաքացիական իրավունք բաժին

Հարց 4

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բխում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից:

Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության համաձայն՝ ամուսիններն իրավունք ունեն ամուսնական պայմանագրով որոշելու միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտներին մասնակցելու եղանակները, իրենցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսեր կատարելու կարգը, այն գույքը, որ պետք է հանձնվի իրենցից յուրաքանչյուրին ամուսնալուծվելիս, ինչպես նաև իրավունք ունեն ամուսնական պայմանագրով նախատեսելու իրենց գույքային հարաբերություններին վերաբերող ցանկացած այլ նորմեր: Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են նախատեսել ընդհանուր գույքը բաժանելու հետ կապված վեճն առևտրային արբիտրաժի միջոցով լուծելու հնարավորություն:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ամուսնական պայմանագիրը չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը, իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին:

Նույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է նաև ամուսնական պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչել ամուսիններից մեկի պահանջով, եթե այդ պայմանագրի պայմանները տվյալ ամուսնուն դնում են ծայրահեղ անբարենպաստ իրավիճակի մեջ:

Ամուսնական պայմանագրի՝ նույն օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի այլ պահանջները խախտող պայմաններն առ ոչինչ են:

Նշվածից հետևում է, որ ամուսնական պայմանագրով ամուսիններն իրավունք ունեն որոշելու այդ թվում իրենցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսեր կատարելու կարգը, ինչից էլ հետևում է, որ Հավակնորդի կողմից ընտրված պատասխանն սխալ է:

Հարց 13

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3025/02/11 քաղաքացիական գործով 27.11.2015 թվականի որոշմամբ կատարել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի համակարգային վերլուծություն և արձանագրել, որ ապօրինի դատապարտելու հետևանքով պատճառված վնասը հատուցվում է անկախ դատարանի պաշտոնատար անձանց մեղքից, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը կիրառելի է այն դեպքում, երբ դատարանի պաշտոնատար անձանց գործողությունները չեն հանգեցրել անձի ապօրինի դատապարտմանը:

Հարց 28

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում (տես թիվ ԵԱՔԴ/2190/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Հարց 32

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1114-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից ներկայացված փաստարկաներին, ապա հարցը վերաբերել է ոչ թե որոշման նախագծի, այլ՝ արդեն իսկ ընդունված որոշման նկատմամբ հեղինակային իրավունք ճանաչելու հնարավորությանը:

Հարց 33

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1035-րդ հոդվածի 3-րդ մասով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1032-րդ հոդվածին, ապա այն տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ ըստ խնդրի փաստերի պահանջը ներկայացվել է համատեղ գործունեության պայմանագրի ժամկետը լրանալուց (դադարելուց) հետո:

Հարց 31

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ԵԱՆԴ/0399/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թվականի որոշմամբ անդրադառնալով նշված հարցին, արձանագրել է, որ գրավադրված անշարժ գույքն իրացնելիս տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գինը կարող է լինել միայն դրա արագ վաճառքի գինը, այսինքն՝ լիկվիդացիոն արժեքը, քանի որ միայն նման ձևով է հնարավոր ապահովել գրավի առարկայի արագ իրացումն ու գրավառուի պահանջների բավարարումը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 6211 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ